

շառին այդ զօրութիւնը՝ որ կար միշտ, և որուն կարօտ էին միշտ: Եւ չէ կարեւրի ըմբռնել՝ թէ անոնք զՔաղկեդոն մերժելով սկիզբէն, կրնային նախ կրօնական միութեան մէջ մնալ քաղկեդոնական Յուսաց հետ այնքան ժամանակ, և յետոյ

խզուիլ նոյն խնդրոյն պատճառաւ: Հակասական և անտեղի կը լինէր իրենց ընթացքը: Օրմանեանի այս մտքի խաղը, ստեղծուած զբասեղանին առջև, սահմանուած է մնալու միշտ մտքի խաղ, ոչ պատմութիւն:

(Շարունակելի)

Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

ՀԱՅՈՑ ԳԱՂԹԸ ԿԱՄԵՆԻՑԷՆ ՖԻԼԻՊԷ

(1670-74)

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԹՈՒՂԹ ՄԸ

ԲԱՋՄԱՎԷՊԻ՝ մէջ Ապրո Չէլէպիի կենսագրութիւնը վերջացնելէս առաջ խոստացայ հրատարակել նաև պուլկարահայոց պատմութեան համար շահեկան՝ մանաւանդ Ֆիլիպէի հայոց համար կարևոր մէկ երկու հին վաւերագրութիւն: Ասոնցմէ առաջինին կարևորութիւնը կ'ուզեմ շեշտել հոս, յարգելի ընթերցողիս ուշադրութեան յանձնելով սոյն քանի մը տողերս:

Հանդէս Ամսօրեայի¹ մէջ երբ Հ. Գալէքեարեան « Պէյօղլուի Գերեզմանատան » իր Պատմութեան ընթացքին կը գրէր Երեմիա Չէլէպի Գէօմիւրճեանի մասին, ստորին լուսանցքին վրայ կ'աւելցնէր թէ Երեմիա Չէլէպիի 1670ական թուական ներուն զբաժ Ռումելիի Հայոց յանգուլընալ, բազմատողեայ պատմութիւնը՝ այժմ դժբախտաբար կորսուած է: — Արդ ուրախ եմ ըսելու որ սոյն պատմագրութիւնը տետրակի մը մէջ ամբողջութեամբ կը գտնուի, որմէ համառօտագրեալ է սոյն վաւերագրութիւնս:

Բնագիր տետրակին Ա. մասը կը պատկանի Ֆիլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյն հայերէ գրաւման և առաջին անգամ վերանորոգման, իսկ երկրորդ մասը լիակատար պատմութիւնն է հայոց 1671ին կամենիցէն փախուստին և երեք նաւերով

Սև ծովի վրայ թափանչելուն, որոնցմէ մէկ մասը հուսկ յետոյ կու գայ հաստատուիլ Ֆիլիպէ ու 1675ին Ս. Գէորգ մատուոյն տիրանալ:

Սոյն բնագիրը ձեռք անցնելէ առաջ Ֆիլիպէի հայ հնութիւններով զբաղած ատենա եկեղեցւոյ գրեթեուն մէջ գտայ ձեռագիր « Ստորագրութիւն սուրբ եկեղեցւոյս » անուն 12 թերթեայ տետրակ մը՝ խնամքով գրուած: Տետրակիս կէսը նուր ուած է 1828ին Ֆիլիպէի Ս. Գէորգ եկեղեցւոյն նորոգման նկարագրութեան իսկ միւս կէսը համառօտագրութիւնն է « Երեմիա » անուն մէկու մը գործին—որուն բնագիրը ինչպէս ըսինք ձեռք անցուցի վերջը:

Այս « Երեմիան » ուրիշ մէկը չէ բայց եթէ Երեմիա Չէլէպի Գէօմիւրճեան, մտերիմ բարեկամը Ապրո Չէլէպիի Ան աւանատես և ականջալուր վկան եղած է այդ դէպքերուն:

Հոս կու տանք համառօտագրութիւնը՝ որ ինքնին արդէն երկար է ըստ բաւականին:

« Ստորագրութիւն սուրբ եկեղեցւոյն » հատորիկը խիստ մեծ խնամքով կը պահուէր Ս. Գէորգի եկեղեցւոյն մէջ ի Ֆիլիպէ:

Սոյն և միւս պատմական վաւերագրութիւնները, որոնք Պուլկարահայոց պատմութեան համար առատ և շահեկան նիւթեր են, հետզհետէ կը խոստանամ հրատարակել:

1. Բգմ. 1926, էջ 42:

2. Հանգ. Ամս. 1911. էջ 474:

Վիպասանութիւնն առման Ս. Գեորգ եկեղեցւոյ. որ ի Մակէդոնիայ ի փոխպետարանիս. ի ձեռաց ազգին Յունաց

ի Զորորդ Սուլթան Մէհմէտի ի քսան եօթնորորդ ամի թաղաբնութեան նորա. նորին բարձու հրամանաւ որ երթեալ էր բոլոր զօրութեամբ իւրով ի նահանգին Բուրնիս ի պատեալազմ և անդ իսկոյն առեալ զկամենից զլեւացոց; զբուսաց և զհայոց եկեղեցիսն դարձոյց ի մզկիթ ըստ սովորութեան իւրեանց և զբոլոր բնակիչսն արար հարկատու. իսկ ոմանք երեւելիք ի հայոց խորհուրդեամբ ի միջի իւրեանց չգրան ընդ Բանակին Անդրիանուպոլիս և Մուսցեալքն յազգէն հայոց հանդերձ պարագայիս քն իւրեանց հրամանաւ արքունի յեզրու Սպիտակ ծովուն իջուցեալ և անդ ի յերիս նաւս բաժանեալ՝ յուղի արկին յարեւելս կոյս Միշկերական ծովուն; Վասն որոյ անկեալ սոցա առաջի փրկութեան մին էհաս ի Ղալաթիա կոստանդնուպոլսյ՝ և միւսն յեզրու Սեաւ ծովու հանդէպ Անիլու Պարզագու ի բերդն Սիւզպոլսոյ. իսկ երրորդն յանդիման Պոնտոսի ի հարաւակողմն պատահեալ անհնարին ալէկոծութեան ի քայլ-քայլէն ի բռնութեան հողմոց իննսուն և եօթն հոգիք թօթափեալ ի ջուր զլուսեցան ի կենաց աստիւ: Ապա զպստսիկ ամենայն իբրեւ լուաւ. ընդ այն ժամանակս պէլրատիս Աբրահամ Չէլէպին (անուանեալ Ապրո Չէլէպի) որ ընդ նմին միջոցին յայտունի դրան կայր վաճառականութեան աղազաւ. առաւել ի սիրտ խոցեալ զանհնարին կիրս կրէր յանձին վասն ժողովրդական կամենացոց:

Ուստի կոչեալ առ ինքն զգլխաւորս ժողովրդէ աստի որ յԱնդրիանուպոլիս եկեալ էին ընդ բանակին, և մինիթարեալ զնոսա Խո չորեք հաւրիւր մառնիլ յղեալ առ այն վտարանդեալ ժողովորդն զոր և առեալ ծանոթացեալքն Աբրահամ Չէլէպոյն՝ յգեցին եթէ առ Ղալաթիա և եթէ առ Սիւզպոլիս եղեալ վտարանդեալ ժողովորդսն, առ որս ապա յայտնի վայրի հրաման էհաս ի թաղաբնութեան թէ որքան և ուր ուրեք գտանիցին յազգէն Հայոց ժողովուրդք զամենեւեցոց. երթեալք ի Մակեդոնիա քաղաք գտցն գտեղի բնակութեան իւրեանց և անդ առցնն զկայ: Ապա սակաւ ինչ շունչ առեալ յոգնութեան Աբրահամ Չէլէպոյն, որպէս ա-

սացաք վերականգնեցաւ իւրեանց եկեալ հասին ի փոխպետարանիս և անդ տեսեալ զմիւս մեանս յարտասուս ցնդէին վասն կրեալ տառապանաց և ազգի ազգի վշտաբնութեանց իւրեանց որ էհաս ի վերայ նոցա. և իբրեւ այն ինչ ի հանդարտել էին, եկն յԱստուծոյ առ նա տարածմա՞մանս վրիժառու Աստուածային բարկութեան որ ոչ լուեալ և տեսեալ էին բնաւ. որ ևս զբազումս յազգաց ամենից իբրեւ զգերանդի հնձեալ արմատոց կենաց եբարձ ի վշտաց աստի անկայուն և կենցաղոյս և սակաւ որոյ վերստին անկանի ի սուգ տրամոլութեան:

Այլ աստէն վերստին օգնական գտաւ Աբրահամ այժմ ժողովրդեան. զի գնացեալ ոմանք ի սոցունց գլխաւորաց ի Անդրիանուպոլիս առ դուռն աբգունի խնդրեալ ինքնեանց զաղօթարան իմն աղբայական հրամանէ զոր անդ ուրեմն յուսացնել նոցա Աբրահամ Չէլէպի զկրպ խնդրանաց զորեւ և զորպէսն շարժելուին ինքնեանց, ընդ որս խնդրէր անձամբ և զաղաւ շահքս մատուցանէր երեւելաց տան:

Ապա մինչ հրաման եղև յաղբայէն տալ ի փոխպետարանիս մինն յութիւն եկեղեցեաց լուսնաց՝ ազգին հայոց, չգրան հրամանաւ այնու և ուրախութեամբ մեծան ի փոխպետարանիս թէպէտ և չտալ երեցուցին յոյնք զեկեղեցին. սակայն վասն հրամանին և իրաւանց առին զեկեղեցին՝ որ կառուցեալ յանուն Սրբոյն Վերգայ:

Ապա յորժամ տեսին թէ ունի զեկեղեցին զկառուութիւնն նորովմա՞ն ըստ ամենայնի. վասն որոյ յորժամ լուաւ Աբրահամ Չէլէպին, եթէ բանիւ և եթէ զրով յանձն էառ վճառել որքան որ գնած է ի պէտս յինութեան եկեղեցւոյ՝ անձին իւրոյ ի յիշատակ յաւիտենական և սակաւ ինչ փող ևս յղեաց զսկիզբն առնել յինութեան. աստի սկիզբն արարին նորոգել բանին յուսադրութեան Աբրահամ Չէլէպոյն: Բայց ի յայտմ հոգեւոր ուրախութեան պարապիլն էհաս անդարձ հրամանն վերին՝ փոխել յաստեայց Աբրահամ Չէլէպոյն յանանց կեանսն, զի հանգեալ ի Տէր նստատեական անուամբ յիտուն և հինգ ամաց, ի թուականութեան հայոց հազար հարիւր քսան և հինգ և եղաւ ի տապանի յԱնդրիանուպոլիս: Այլ որդին Սարգիս Չէլէպի ոչ գտաւ առքնիքն զի յղեալ էր յիտալիա վաճառականութեամբ:

Եւ երկորորդ որդին Պարոն Մատթէոս Չէլէպի

1. Ասիական համառոտագրին սխալն է. ու ծովուն անդ Սպիտակ և Միշկերական ծով կը գրէ, իսկ Ղալաթիան

Պուրկազի մօտ գտնուող Սև ծովու վրայ, ուրիշ Ղալաթիա մըն է:

մինչ էր ի Զմիւռնիս՝ գրէր առ նա զալ առ ինքն զի տօն մեծի Զատիկին ի միասին արասցուք. և միշտ յապասելն ճանապարհի նորա ո՛հ Մատթէոս հառաչելով և որդւոյն կտակ առնելով՝ յանձն արար զհոգի իւր ի ձեռն հրէշտակին մարդասէր ինձամցն. իսկ յետ ութ աւուրց ապա եկեալ է՛հաս Մատթէոս Զէլէպի յԱղարիանու պոլիս՝ անգիտացեալ զմահուանէ հօրն իւրոյ: Ուստի յայսմ ժամանակի եպիսկոպոս, վարդապետ, քահանայք, և տանուտեարք եկեալ միութարութիւն մատուցին նմա ըստ արժանւոյն: Եւ Աստուծոյ գրող նախկին պատմութեան (ընդ գծումը մերն է) զանուն իւր յայտնէ՝ զոչ յերմիսս իրրև զերեմիա մարգարէ պատմող զորով ինքնան այսպիսի անցից անցելոց, որպէս վիպեալ էր երեմիա մարգարէ պատմելի ինն զրով զանցս Ս. Երուսաղէմի ի բարեկրնական բռնութեան:

Ուստի յորժամ լուաւ ի փիլիպուպոլիս ժողովուրդք զամենեցոց, թէ եկեալ է Մատթէոս Զէլէպի յԱղարիանուպոլիս, զիր միութարութեան յղեցին առ նա վայելուչ պատուասիրութեամբ, եթէ քահանայք և եթէ զվիւտոր տանուտեարք ի ձեռն պատշաճաւոր անձին՝ պատմաբանելով նմա զերախտիս հօրն իւր և սակաւ ինչ դրամ յառաջադրել յղեն. և զբովանակ ծախսն հաւուցանել խոտանալն. և ի ցուցանելն զհաշուագիրն թէ զնացեալ է ի պէտս եկեղեցւոյ շինութեան հազար վից հարիւր երեսուն և վեց մանչիւ (1636 մանչիւ կամ զորով) ինքն Մատթէոս Զէլէպին վասն այսր պատճառի զհօրն արարեալ կտակն ամբողջապէս հատոյց եկելոց՝ զզոյն հարազատ որդւոյ և նման հօրն իւրոյ հաստատելով: Ապա յորժամ հասին ի փիլիպուպոլիս այսօրիկ երեւելի անձինք բազում շնորհակալութեամբ զպարոն Մատթէոս Զէլէպոյն բոլորքն եւս կարի շնորհակալ լեալ՝ զազօթս, պաղատանս առ Աստուած մատուցին և դարձեալ զգիր շնորհակալութեան յղեցին առ Մատթէոս Զէլէպին պատմելով անոց զբնաւ անցս անցելոց ընդ անձինս իւրեանց և ի վախճանի եկեալ ի փիլիպուպոլիս՝ զոչ զտանելն իւրեանց զժամանակիս և զտաքսման պատճառ սոյն եկեղեցւոյս՝ զԱբրահամ Զէլէպի զհայրն իւր. և զի ի միջի իւրեանց զքառասուն և ութ մանչիւ ընդ հարիւրի ժողովելն վասն նորոգման. և այն անբաւական զոչ տեսնելով՝ ի մտաբերելն յանձինս ի յեռամատարան եկեղեցւոյ Ամնաստուրբ Աստուածածնի և միշտ անարատ կուսի:

Որ արդ համառօտեալ ի գիրութիւն իմաց-

ման հասարակօրէն յԱղարիանուպոլիս Մեսրոպ եպիսկոպոսէ ի թիւ հայոց հազար երկու հարիւր եօթանասուն և եօթն (1277=1828) և ի յունիսի վելատսնեբորդն (16) ի փիլիպուպոլիս:

Իսկ արդ՝ վերստին առօրինակեալ այս ի նոյն օրինակէ անտի ի Պետրոս Դարէս Տէրայ Ատեփանեան ընկի Աղարիանուպոլսեցւոյ ի թիւ Հայոց՝ ՌՄՀէին (1828):

Աշխարհագրական և ուրիշ ինչ ինչ սխալները համառօտագիր Մեսրոպ եպիսկոպոսի կը վերաբերին. — Կամենեցէն Սպիտակ ծով և Մեջերկրական երթալ անկարելի էր... ոչ թէ փախչել այլ ճամբորդելն անգամ:

Յ. ՔԻՐԵՍԵԱՆ

ԴԻՏՈՂ ՈՒԹԻՒՆՆԵՐ

« ՀԱՅԵՐԷՆ ԴՈՐ ԲԱՌԵՐ » ՈՒՆ՝

(Շար. տես Բազմ. 1927 էջ 179)

ԼԹ. — Գազաղիւ (էջ 49).

« Գազաղիւ »ը զայրանալ մեկնած է: Բայց կարծեմ եթէ ըսվի հնչյուն բառն ալ մեկնած ըլլար՝ իմաստն աւելի որոշ պիտի գտնէր: « Գազաղիւ » ուրեմն, առանձին չէ որ բարկանալ, նեղորտիլ կը նշանակէ, այլ հնչյւն հետ Հնչ, կամ հռնապ, յգ. հաւածիպ արբ. յոնք ըսել է: Ուստի « գազաղիւ »ը ընդ հնչյունն, համազօր կը զբռնեմ հայկական « զյօնս պոստի » ոճին, այսինքն՝ յօնքերն ամփոփել, ընդունելը ժողովելով՝ լուրջ ու խիստ կերպարանք մ'առնուլ, Հմմ. Առնեմ բոգք. « պստսն »:

Խ. — Գուն (էջ 50).

Ասոր արմատն ալ պարսկերէնի մէջ կը փնտռէ. բայց ի զուր: « Գնար »ը « Գնար » զրոգը, (տ. Աճառ. 41), շատ լաւ կրնար « քուն »ն ալ « գուն » գրել: Բառն, ուրեմն, քուն է: « Հնծիւր, որդեակ... ինչի՞ գունն », ըսել է « Հնծիւր, տղաս... ինչ կը քնա-

1. Հր. Աճառն. Տպ. Վենետիկ Ա. Վ. 1913. Բ. Վ. 1926.